

Չապրինք փորձանքի հանդիպելու ակնկալութեամբ

Ճիշդ է, որ Պօղոս առաքեալ կ'ըսէ, թէ մենք «նեղութիւններուն մէջ ապրելու կոչուած ենք» (Ա.Թս. 3.3), բայց այդ չի նշանակեր, որ մենք ամէն օր եւ ամէն վայրկեան պէտք է ակնկալենք մեր գլխուն փորձանքի մը գալը: Աստուծոյ գաւակը փորձութիւններու հանդիպելու ակնկալութեամբ պէտք է չէ ապրի, այլ՝ անոնց հանդիպելէ ետք, այդ բոլորէն յաղթականօրէն դուրս գալու ակնկալութեամբ: Փորձութիւններու հանդիպելու ակնկալութեամբ ու յոյսով ապրիլը, կրնայ խանգարել մեր խաղաղութիւնը եւ մեզ մտահոգութեան ցանցին մէջ պահել: Աստուած չ'ուզեր, որ իր գաւակները իրենց օրը անցնեն մտահոգութեամբ: Մտահոգութիւնը Աստուծոյ նախախնամութեան հանդէպ անվստահութիւն է:

Սրբուհի Աստուածածինին եւ Յովհաննէս Կարապետին, սուրբ Ստեփանոս Նախակային, սուրբ Գրիգոր Լուսաւորիչին եւ Քուրդր սուրբ վկաներուդ բարեխօսութեամբ լսէ՛ ինձի՛ եղկելիս, եւ ողորմէ՛ մեղաւորիս: Փնտրէ՛ կորսուածս, ձեռք մեկնէ՛ գլորածիս, առաջնորդէ՛ մոլորածս, խաւարէն դէպի լոյս հանէ՛ զիս եւ ազատութի՛ւն շնորհէ՛ հոգիիս: Հաստատէ՛ քու սիրոյդ մէջ եւ բեւեռէ՛ Քու Երկիրդ: Մաքրէ՛ հոգիիս տանառը եւ մօտս օթեւանէ՛: Փակէ՛ մեղքերուս դուռը եւ զիս պարսպէ՛ ոստիս, չար ու անիրաւ մարդէն փրկէ՛ զիս, առաքինութեան գործերով զարդարէ՛ եւ պարգեւէ՛ Քու աննառ երանութիւնդ: Ողորմէ՛ մեզի՛ ողջերուս, եւ պայծառացնելով լուսաւորէ՛ մեր ննջեցեալներուն հոգիները: Եփրեմ Ասորի

ԵՔԷ ԻՆՔՁԻՆՔԴ ԱՍՏՈՒԾՈՅ Կ՛ՈՒՉԵՍ ՅԱՆՉՆԵԼ ԿԱՐԴԱ՝

Սաղմոս 23

Տէ՛րն է լոյսս եւ փրկութիւնս, որմէ՛ պիտի վախնամ ես. Տէ՛րն է կեանքիս ապաւենը, որմէ՛ պիտի դողամ ես: Չար մարդիկ, որոնք հետս թշնամացած՝ զիս կը հալածեն, փորձեցին միսս ուտել, սակայն իրէ՛նք տկարացան եւ ինկան: Նոյնիսկ եթէ ամբողջ բանակ մը վրաս յարձակի, սիրտս վախ պիտի չզգայ. նոյնիսկ եթէ ինձի դէմ ճակատամարտ յարդարուի դարձեալ Աստուծոյ պիտի վստահիմ: Մէկ բան խնդրեցի Տիրոջմէ՛ եւ սա է աղաչանքս. կեանքիս բոլոր օրերուն Տիրոջ տան մէջ բնակիլ, ըմբռնել Տիրոջ վայելչութիւնը, եւ զինք պաշտել իր տաճարին մէջ: Նեղութեան ժամանակ իր յարկին տակ պիտի պահէ զիս, իր տաճարը զիս պիտի պատսպարէ, ամուր ժայռի վրայ պիտի կանգնէ զիս: Եւ հիմա գլուխս բարձր պիտի կանգնիմ զիս շրջապատող թշնամիներուս դէմ եւ ուրախ աղաղակով զոհեր պիտի մատուցանեմ Տիրոջ տաճարին մէջ, պիտի երգեմ ու նուագեմ իրեն համար:

Սիրելի ընթերցող, ՃՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»-ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՅԷ.



ՔՈՒ ԽՍՐԷԴ ԽՍ ՈՏԵՐՈՐԻՍ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ՇԱԽՂՆԵՐՈՐԻՍ ԼՈՅՍ (Սղ.119-105)

ԺԳ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ , 16 ՕԳՈՍՏՈՍ 2020 ԹԻԻ 33

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ Երգ 4.915, 8.14: Ես 7.10-16: Գղ 3.29-4.7: ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՂՈՒԿԱՍ 2. 1-7

ՎԵՐԱՓՈԽԱՄԱՆ Ա՝ ԱՍՏՈՒԱԾԱԾԷՆԷ



ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 2.1-7

Այդ օրերուն Օգոստոս կայսր հրամանագիր հանեց՝ իր կայսրութեան սահմաններուն մէջ գտնուող բոլոր բնակիչներուն մարդահամարը կատարելու: Այս առաջին մարդահամարը տեղի ունեցաւ Սուրիոյ կառավարիչ Կիրենիոսի օրերուն: Ամէն մարդ իր ծննդավայրը կ'երթար իր անունը արձանագրել տալու համար: Յովսէփ Դաւիթի սերունդէն ըլլալուն համար, Գալիլիայի Նազարէթ քաղաքէն ելաւ եւ իր անունը արձանագրել տալու համար գնաց Հրէաստանի Բեթղեհէմ քաղաքը՝ Դաւիթ քաղաքի ծննդավայրը: Իրեն կ'ընկերանար իր նշանածը՝ Մարիամ, որ յղի էր:

Բեթղեհէմի մէջ, Մարիամի ծննդաբերութեան ժամանակը հասաւ եւ ծնաւ իր անդրանիկ գաւակը, որ փաթեց խանձարուրով եւ դրաւ մսուրի մը մէջ, որովհետեւ պանդոկին մէջ իրենց համար տեղ չկար:

ԱՌԱԿԱՑ (Գ. 23, 19-25)

Որդեա՛կ իմ, լսէ՛ ու իմաստուն եղի՛ր եւ քու սիրտդ դէպի ուղիղ ճամբան շտկէ՛: Մի՛ ընկերանար գինեմոլներուն ու իրենց մարմինը մաշեցնողներուն, վասն զի գինեմոլն ու շռայլը աղքատ կ'ըլլան եւ շատ քունը՝ պատուտած հանդերձներ կը հագցնէ: Հնազանդէ՛ մօրդ, որ քեզ ծներ է, ու մի՛ անարգեր քու հայրդ, երբ կը ծերանայ: Ճշմարտութիւնը ծախու ա՛ն ու զանիկա մի՛ ծախեր: Նմանապէս՝ իմաստութիւնը, խրատն ու հանճարը:

### ԵՐԳ ԵՐԳՈՑ ԳԻՐՔԵՆ 4.9-15, 8.14

Գրաեցիր սիրտս, հոգեա՛կ իմ հարս, սիրտս գրաեցիր մէկ նայածքով, վզիդ շնորհալի մէկ շարժումով:

Ի՛նչ զգիսիչ է սերդ, հոգեա՛կ իմ հարս, որքա՛ն ատի թաղցր է սերդ՝ գինիէն, եւ զգեստներուդ անոյշ բուրմունքը՝ բոլոր խունկերէն:

Շրթներդ մեղր կը կաթի, հոգեա՛կ իմ հարս, մեղր եւ կաթ կը ծորի լեզուէդ. եւ զգեստներուդ անոյշ բուրմունքը նման է կնդրուկի բոյրին:

Փակուած պարտէզ է իմ հարս հոգեակս, փակուած պարտէզ, կնքուած աղբիւր:

Նռնենիներու դրախտ մըն եւ դուն ամենէն ընտիր եւ բուրումնաւետ տունկերով՝ հինայ ու նարդոս, նարդոս ու քրքում, խնկեղէզ ու կինամոն, եւ խնկաբեր բոլոր ծառերով՝ զըմուռս ու հալուէ, եւ ընտիր բոլոր խնկեցիները:

Բուրաստաններու աղբիւր եւ կեանքի ջուրին ակը, որ Լիբանանէն կը բղխի:

Տէրը ստեղծեց եւ հաստատեց քեզ, մօրդ արգանդէն քեզ պատրաստեց, ո՛վ կիներու գեղեցկագոյնը. մայրդ անթերի ծնաւ քեզ:

**Շարունակել  
Աստուածաշունչէն**



3.29- 4.7

Ապա ուրեմն, եթէ Գրիստոսի կը պատկանի՛ք՝ կը նշանակէ թէ Արրահամի գաւակներ է՛ք եւ պիտի ժառանգէ՛ք ինչ որ Աստուած անոր խոստացաւ:

Բայց գիտցէ՛ք նաեւ, թէ ժառանգորդ մը թէեւ ամբողջ ժառանգութեան իսկական տէրն է, բայց որքան ատեն որ անիկա անչափահաս է՝ տարբերութիւն չունի ծառայէ մը, քանի խնամակալներու եւ հոգաբարձուներու ենթակայ է, մինչեւ հասնի իր հօրը որոշած ժամանակակէտը: Նոյնն է մեր ալ պարագան: Որքան ատեն, որ հոգեւորապէս անչափահաս էիմք՝ բնութեան ոյժերուն կ'ենթարկուէինք ու կը ծառայէինք: Բայց հիմա յարմար ժամանակը հասած համարելով, Աստուած աշխարհ դրկեց իր Որդին որ մարդկային մօրմէ մը ծնաւ եւ Մովսիսական Օրէնքին տակ ապրեցաւ, որպէսզի մեզ օրէնքին գերութենէն փրկէ եւ Աստուծոյ որդիներ դարձնէ: Արդ, որովհետեւ իր որդիներն ենք՝ Աստուած մեր սիրտերուն մէջ դրկեց իր Որդիին Հոգին, որով զԱստուած «Հայր» կը կոչենք: Ուստի այլեւս ծառայ չէ՛ք, այլ որդի. եւ քանի որդի է՛ք՝ Աստուծոյ խոստումը պիտի ժառանգէ՛ք:

### ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ ՎԵՐԱՓՈԽՈՒՄ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒՍԾԱԾԻՆԻ

«Վերափոխում» բառը, գրաբար լեզուով նկարի առնուած, կը նշանակէ վեր, դէպի երկինք փոխադրուիլ: Իսկապէս ալ, վերափոխումը Սուրբ Աստուածածինի մահուան յիշատակումն է, որ կը կատարուի Օգոստոս 15-ին մերձակայ, այսինքն Օգոստոս 12 - 18 հանդիպող Կիրակին:

Վերափոխումը Նայասարանայց եկեղեցոյ հինգ փաղաւարներէն մէկն է: Այս փոսին առթիւ մեր եկեղեցին կը նշէ «Քրիստոսի գալուստն ի փոխումն մօրն եւ կուսի»: Այլ խօսքով, փօսը կ'ակնարկէ այն պատահարին, ըստ որուն Քրիստոս ինք իջաւ իր մօր մահուան առթիւ եւ զինք փոխադրեց երկինք:

#### ՎԵՐԱՓՈԽՈՒՄԻ ԱՄԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԵՆ՝ ԽԱՂՈՐՈՐՅԵՔ

*«Հնաւանդ, գեղեցիկ, այլեւ բարոյալից սովորութիւնն էր հայ ժողովուրդի մէջ, որ երբ բերքը կը հասնի, երախայրիքը հասունցած առաջին եւ լաւագոյն բաժինը իբրեւ շնորհակալիք եւ առ ի երախտագիտութիւն Աստուծոյ կը տրուի: Եթէ նախաքրիստոնէական շրջանին այս բարոյալից սովորութիւնը կար եւ ան կը մատուցուէր աստուածներուն, ապա պահուեցաւ գաղափարը եւ շարունակուեցաւ այդ ընծայաբերումը մէկ տարբերութեամբ՝ այս անգամ եկեղեցիին եւ անոր միջոցաւ ուր որ անհրաժեշտութիւն է:*

*Խաղողը բոլոր պտուղներուն մէջ նախապատիւ է, որովհետեւ անկէ կը պատրաստուի գինին, որ Ս. Պատարագի, Ս. Հաղորդութեան, Ս. Պսակի խորհուրդներուն մէջ խորհրդանշական գործածութեան կը դրուի»:*

### Շ Ա Ր Ա Կ Ա Ն ԿԱՆՈՆ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒՍԾԱԾԻՆԻՆ ՕՐԿ. ԴՁ

(գրաբար)

Այսօր ժողովեալ սրբոցն ի միասին երանելի առաքեալն եւ սուրբ կուսանքն ջահագգեստու՛մ պայծառացեալ լուցանելին զըլապտերս իւրեանց. եւ միաձայնեալ ասէին, օրհնեալ եւ ամենօրհնեալ ի կանայս:

Այսօր դնելով ըզսուրբ կոյսն առ դրանքն գերեզմանին, սպասէին եւ ակն ունէին տեառն իսկ ինքնին գոլով, գեր ի վերոյ տեսեալ գարարիչն եկեալ բագում հրեշտակօք. եւ նոցա միաձայնեալ ասէին, օրհնեալ եւ ամենօրհնեալ ի կանայս:

Այսօր տեսեալ ըզսուրբ կոյսըն թոուցեալ յօդս, եւ ամպեղէն կառօքն իվեր համբարձեալ յերկինս. մըտանելով յերկնային խորանսն ընդ իմաստուն կուսանս. եւ նոցա միաձայնեալ ասէին, օրհնեալ եւ...

(Աշխարհաբար)

Այսօր միասին հաւաքուած սուրբերը՝ երանելի առաքեալներն ու սուրբ կոյսերը, լուսաւոր վզեաններով պայծառացած, իրենց լապտերները կը վառեն եւ միաձայն կ'ըսեն՝ օրհնեալ եւ դուն կիներուն մէջ ամէնօրհնեալ:

Այսօր սուրբ կոյսը գերեզմանին առջեւ դնելով կը սպասէին եւ կ'ակնկալէին ինքնին տիրոջ հոն ըլլալը, բայց տեսան որ Արարիչը վերէն կու գար բազում հրեշտակներով. եւ անոնք միաձայն կ'ըսէին՝ օրհնեալ եւ դուն կիներուն մէջ ամէնօրհնեալ:

Այսօր տեսան սուրբ կոյսին օգին մէջ թռչիլը եւ ամպեղէն կառքով վեր երկինք համբառնալը եւ երկնային խորաններուն մէջ մտնելը իմաստուն կոյսերուն հետ եւ անոնք միաձայն կ'ըսէին՝ օրհնեալ եւ դուն կիներուն մէջ ամէնօրհնեալ: